ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

# «ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

*3501 ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Սիսիան, Չարենցի 14, Ֆաքս և Հեռ. (0 283) 2-35-01 sisian.medcenter@mail.ru*

03.05.2024թ.

*«ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ*

*ՏՆՕՐԵՆ Ա. ՇԵԳՈՒՆՑԻՆ*

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ի միջև 16.02.2024թ. կնքված «ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/05-1» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծել, քանի որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ (ՀՎՀՀ 09212215)-ի հիմնադիրն ու տնօրենը հանդիսանում է նույն «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01063047)-ի տնօրենը: «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելն ինքնաբերաբար հանգեցնում է «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից 29.04.2024թ. ուղարկված Ե/1049-24 գրությունը և ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետը «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ամբողջությամբ լուծում է «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ի միջև 16.02.2024թ. կնքված «ՍՄՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/05-1» ծածկագրով գնման պայմանագիրը 6, 12, 16-19, 24, 25, 32, 52, 59, 64, 70, 74, 83, 90 չափաբաժինների մասով:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները նշված չափաբաժինների մասով, ապա «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

<<ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ

ՏՆՕՐԵՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ